

նրա համար դեռ ևս թանգ են մեր դպրոց-ները, քանի որ նա է միայն ձեռնհաս այդ անկուռ:

Որոշ, պարտադիր ընդհանուր ու լայն ծրագրի և կարգ ու կանոնի իրագործումը միայն կարող է վերկել մեր թիւմ, դպրոցնե-րը նրանց աստիճանաբար անկումից:

Կ. Թաղէոսեան
Մ օ ս կ վ ա

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՅՈՒ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԳԱ-ԻԱՌՈՒՄ

I
Շոքէի, 16 հոկտեմբերի
Ամսիս 13-ին Դարարազի թիւական հո-գեւոր դպրոցում կատարվեց հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօրեկանական տօնակատարու-թիւնը:

Առաւօտեան ժամը 10¹/₂-ին քաղաքիս ս. Ամենափրկիչ եկեղեցում կատարվեց հան-դիսաւոր պատարագ, ապա վերջում հոգե-հանգիստ ս. Մեսրոպ ս. Սահակ թարգմա-նիչների և գրական անվաստանում վաս-տակաւոր մշակների յիշատակին: Պատա-րագին և հոգեհանգիստին ներկայ էին քա-ղաքիս բոլոր հայ կրթական հաստատու-թիւնների աշակերտները իրանց ուսուցչական և հոգաբարձական մարմին-ների հետ: Միև դպրոցներից պարագմունք-ներից ազատված էին հայ աշակերտները:

Հոգեհանգիստը վերջանալուց յետոյ, ժո-ղովուրդը աշակերտներին հետ զնաց թեմա-կան դպրոցը, հանդիսատես լինելու յօրե-կանական տօնակատարութեանը:

Հանդէսը բացվեց դպրոցի երգչիկ խում-բի «Հայր-մերով», որից յետոյ տեղի պաշ-տօնակատարը խօսեց «տօնի նշանակու-թեան» մասին, ուսուցիչ Յ. Մտեփանեանը խօսեց «գրերի և տպագրութեան ծագման ու նշանակութեան» մասին: Մէջ ընդ մէջ երգեցիկ խումբը երգում էր զանազան երգեր՝ «Տէր, կեցն զու զճայս», «Ով հա-յոց Աստուած», «Հայ ապրենք», «Որ վա-ռեցեր» և «Հնչեցն լաբք», իսկ օրիորդ-ներից արտասանում էին ոտանաւորներ, որոնցից աւելի աչքի էին ընկնում օր. Բ. Այդինեանը, Ա. Միրզաբէկեանը և մի քանի տղաներ: Հանդէսը բաւական տպաւորիչ էր: Միև օրը կատարվեց հայրապետական մաղ-թանք: Օր. Աստ. Տէր-Յովհաննիսեան

II
Գիւրջան, 14 հոկտեմբերի

Այսօր, ամսիս 14-ին, պատարագից և հո-գեհանգիստից յետոյ, տեղի ունեցաւ հոծ բազմութեան (երկուսն) երթ դէպի դպրոց: Դահլիճում հաւաքված երկուսն հանդիսական-ներից դպրոցի աւուսուցչից Միլոսեան ծանօթացրեց տօնի նշանակութեան հետ և յայտնեց, որ մանկավարժական կազմը ներ-կայ տարվայ ընթացքում պատրաստում է տալ ճոխ ծրագրով մի հանդէս՝ նուիրված համազգային տօնին: Ա—ր.

III
Ստաւրօպոլ, 14 հոկտեմբերի

Ստաւրօպոլի հայ հասարակութիւնն էլ ան-մասն չը մնաց համազգային մեծ տօնին մասնակցելուց:

Ամսիս 14-ին, կիրակի օրը, խուռն բազ-մութեան ներկայութեամբ տեղի ունեցաւ պատարագ:

Ս. քահ. Տէր-Յովհաննիսեանը բնաբան ընդունելով «Մայրնի լիզու, մայրնի բար-բառ, ախրժ, ընտանի, իմ հոգու համար» խօսքերը քարոզ խօսեց:

Պատարագի վերջը տեղի ունեցաւ հայ-բապտական մաղթանք, որից յետոյ հոգե-ւորականութիւնը հանդէսադրութեամբ Սա-հակ քահանայի դիմաց «Նմանալ Մովսի-սի» սքանչելի շարականը երգելով դէպի դպրոցի դահլիճը, ուր հոգեհանգստեան կարգ կատարելուց յետոյ աւագ-ուսուցչից Ս. Տէր-Արքայապետը բացեց հանդէսը:

Դպրոցի բնմը տօնի աւերթով զարդար-ված էր 412—1512—1912 թւականներով երկու կողմից գեղեցիկ շրջանակների մէջ զետեղված էին ս. Սահակի և ս. Մեսրոպի մեծադիր պատկերները շրջապատված կեն-դանի ծաղիկներով: Պատկերները մի կող-մը դրված էր ամբիօս: Բնմի ամբողջ ճա-կատի երկարութեամբ գեղեցիկ մեծադիր տառերով գրված էր «Ճանաչել հիմաստու-թիւն և դիւրան, իմանալ գրաստ հանճարոյ» խօսքերը, իսկ հանդիսականների մէջ պա-տերին ամբացած էին հանդէսի ծրագրինե-րը՝ զարդարված հայկական դրօշով: Դպրո-ցը կատարեալ տօնական կերպարանք էր ստացել: Ստաւրօպոլի հայոց դպրոցական դահլիճը տարիներից ի վեր այդպիսի բազ-մութիւն չէր տեսել: Այս բանը պէտք է վերագրել այն հանգամանքին, որ ընտրված մասնաժողովը ոչ մի միջոց չէր խնայել ժողովրդին դպրոց հրաւիրելու:

Նախօրօք տպագիր հրաւերներ էին ու շարված ամենքին և մանաւանդ ամսիս 13-ին, տեղիս ուսուց թերթերից կրկու-սում—«Съверокав. Край» և «Съверъ Ка-вказ» տպված էին Սահակ քահանայի—տա-ռերի գիւտի և տպագրութեան աւերթով ա-ռանձին յօդուածները, որոշեալ հետաքրք-րութիւն առաջ բերելով թէ հայ և թէ օտար հասարակութեան մէջ:

Բնմի վրա կանգնած էր տեղիս եկեղեցա-կան երկուսն քառաձայն խումբը:

Առաջինը ամբիօս բարձրանալով տառերի գիւտի աւերթով մի ընդարձակ ձուռ ասաց աւագ-ուսուցչից Ս. Տէր-Արքայապետանը, որ

րից յետոյ մէջ ընդ մէջ կարգացվեցին ու երգվեցին ոտանաւորներ ու երգեր:

Այս անգամվայ հանդէսը նախկին հան-դէսներից տարբերվում էր նրանով, որ մասնակցողները բոլորն էլ հասակաւորներ էին, բացի օր. Հ. Տէր-Յովհաննիսեանից (հայոց ուսուցչի սան):

Արտանայեցին ոտանաւորներ տիկին Ա-րուսեակ Մանուչարեան, օր. Հ. Գուլարեան, պ. Մ. Երէցփոխեան (Նոր-Նախիջևանի բար-բառով): Աչքի ընկաւ մանաւանդ տ. Մա-նուչարեանը զգացմունքով ու ոգևորութեամբ արտասանած ոտանաւորներով: Տիկինը իբ-րև թափաբասէր խոշոր ոյժ է ներկայաց-նում զաւառական քաղաքների բեմերի հա-մար և համարձակապէս կարելի է ասել, որ իր բնական ու մտածված խաղով կարող է մրցել շատ դերասանուհիների հետ: Տառե-րի գիւտի աւերթով խօսեց Մանակ քահա-նան: Խումբը Մկրտիչ Սաղիսեանի ղեկա-վարութեամբ երգեց մի քանի քառաձայն երգեր:

Հանդէսից յետոյ դպրոցի աշակերտ-աշա-կերտուհիներին բաժանվեցին Ս. ք. Տէր-Յովհաննիսեանի՝ յօրեկանի աւերթով հրա-տարական «Великіе праздники армянскаго народа» բրօշուրները:

Հանդէսը լաւ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա և բոլորն էլ գոհ հեռացան:

Ինչպէս լուռ ենք, դպրոցի ուսուցչական խմբի կողմից շնորհաւորական հեռագիր է ուղարկվել էլ միածին յօրեկանական մաս-նաժողովի անունով: Զ. Տ. Գ.

ԳԱՆՁԱԿԻ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԼՊ-ՐՈՅԻ 50-ԱՄԵԱՅ ԹՅՈՒՆԵՆԸ

Գանձակ, 22 հոկտեմբերի
Կիրակի, հոկտ. 21-ին, հայկական ակում-բի դահլիճում տեղի ունեցաւ ս. Յովհան-նէս եկեղեցու ծխ. դպրոցի 50-ամեայ յօ-բեկանը:

Եղանակը բաւականին նպաստաւոր էր, և դեռ վաղ առաւօտվանից, ուսուցչական խմբի անդուլ ջանքերով՝ ակումբի մուտքը և դահլիճը զարդարված էր կանաչ ոստե-րով, ծաղիկներով, որտեղ ի միջի այլոց՝ բնմի վրա կախված էր երջանկայիշատակ Մատթէոս Ա. կաթողիկոսի մեծադիր լու-սանկարը, շրջապատված գեղեցիկ ծաղիկայ պսակով, աջ և ձախ կողմից ունենալով V դարի անմահ հերոսներ՝ ս. Սահակի և ս. Մեսրոպ լուսանկարները:

Եկեղեցում դպրոցի բարերարներին համար հոգեհանգստեան կարգ կատարելուց յետոյ՝ հոգևորականութիւնը, պուլս ունենալով փոխանորդ Լևոն վարդապետին, ածապրեց ներկայ լինել հանդէսին: Ներկայ էին նաև հոգաբարձութիւնը, ուսուցչական խմբերը, բարձր բաժանմունքի աշակերտութիւնը երկուսն խուռն բազմութիւն:

Ժամը 12-ին յօրեկանական հանդէսը սկսվեց «Եջմիածին ի Հօրէ» շարականով, որից յետոյ հանդէսը բացեց աւագ ուսու-ցիչ Կ. Ղալուզեանը և շեշտեց, թէ ինչպէս սրանից ուղիղ 50 տարի առաջ, մի խումբ բարի մարդկեց նախաձեռնութեամբ, ծը-նունդ է առնում Գանձակում ս. Յովհաննէս եկեղեցու ծխ. դպրոցը, որին ընդառաջ է գալիս հանգուցեալ Մատթէոս Ա. կաթողի-կոսը, օրհնելով իր կծուակով այդ յոյժ կարևոր հիմնարկութեան ձեռնարկողներին, չը խնայելով ոչ մի ջանք առաջ տանելու մատաղ սերնդի առաջադիմութեան զործը: Յետոյ Պ. Ղալուզեանը կանգ առաւ այն հանգամանքի վրա, թէ ինչպէս 50 տարվայ ընթացքում ս. Յովհաննէս եկեղեցու դպրոցը եղել է մի լուսատու փարոս հայ ժողովրդի լուսաւորութեան վեհ գործը առաջ տանելու խնդրում, որից ամբողջ պատմութիւնով ա-ռաջ բերեց, թէ ինչպիսի պայմաններ մէջ է զարգացել 50 տարվայ անցեալ ունեցող դպրոցը:

Նայն դպրոցի ուսուցիչ Ս. Թումանեան խօսեց «հայ դպրոցի դերն ու կեան-քը» թեմայի շուրջը և վերջը շնոր-հաւորելով այսպիսի մի մեծ նշանակութիւն ունեցող կրթական հիմնարկութեան երկար ու ձիգ տարիների յօրեկանը՝ կոչ արաւ գոյութիւն ունեցող օրհնեցիկի հիման վրա երկուսեան դպրոցը վերածել չորսդասեա-նի, որի առաջ օգուտները թերեւս կը լի-նեն ասելի արդիւնաւէտ մեր այս խոպան անդամատանի համար: Յետոյ աշակեր-տուհիները արտասանեցին հայերէն և ուղ-սերէն ոտանաւորներ, որոնց մէջ աչքի էին ընկնում Գ. բաժանմունքի աշակերտները «Աղուէս» ոտանաւորի մէջ և Զ. բաժան-մունքի աշակերտուհի Մարիամ Գրիգորեա-նը, որը բաւական զգացված, գեղեցիկ ա-ռողանութեամբ և քնքոյշ ձայնով արտա-սանեց սուս յայտնի բանաստեղծ Նազօսի «Впередъ» ոտանաւորը և արժանացաւ բուռն ծափահարութեան: Ինչպէս երևում էր, օրիորդը օժտված է բնական տաղան-դով, որի զգացմունքները և ապրումները յուսաւորում էին հանդիսականներին, որ եթէ այդ ուղղութեամբ շարունակի, կարելի է մեծ ապագայ սպասել նրանից: Ընդհանրա-պէս միև ոտանաւորները թոյլ էին և խնամ-քի տեսակէտից աչքաթող արված՝ այսպիսի մի մեծ ու նշանակալից տօնի վերաբերմամբ, որը ներքին չէ ուսուցչ. խմբի համար: Եր-գեցիկ երկձայն խումբը մէջ ընդ մէջ Ար-մենակ Գրիգորեանի ղեկավարութեամբ եր-գեց մի քանի երգեր, որը թոյլ տպաւորու-թիւն թողեց ներկայ երգչներին վրա: